

ԱՆԱՏՈՒԻ ԱԿԱԳՅԱՆ

ՊԱՅԱՆՁԱՏԻՐՈՋ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարողական վարույթում առաջացող իրավահարաբերությունների հիմնական սուբյեկտները պահանջատերն ու պարտապանն են. առանց որոնց կատարողական վարույթում իրավահարաբերությունները կիմաստագրվեն:

Այդ պատճառով կատարողական վարույթի մասնակիցների մեջ որպես առաջնայիններ առանձնացված են պահանջատերն ու պարտապանը:

Իրավաբանական գրականության մեջ պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, որի օգտին կամ ի շահ որի տրվում է կատարողական թերթը:

Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, որը կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ (համձնել դրամական միջոցներ կամ գույք, կատարել այլ պարտավորություններ) կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից: Կատարողական վարույթին կարող են մասնակցել երկու և ավելի պահանջատերեր և պարտապան: Յուրաքանչյուր պահանջատեր կամ պարտապան կատարողական վարույթում մյուս կողմի նկատմամբ հանդես է գալիս ինքնուրույն: Նա կարող է նաև կատարողական վարույթին իր մասնակցությունը փոխանցել համամասնակիցներից մեկին: Օրենքում վերապահություն է տրված նաև այն մասին, որ կատարողական վարույթի կողմերից մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) հարկադիր կատարողը պարտավոր է կատարել նաև փոխարինում՝ օրենքով դատարանի վճռով կամ պայմանագրով որոշված իրավահաջորդով:

Սինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը կատարողական վարույթի ընթացքում կատարված գործողությունները պարտադիր են իրավահաջորդի համար այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին իրավահաջորդի կողմից փոխարինված անձի համար («ԴՎՅԿ մասին» ՀՀ օրենքի, այսուհետ

օրենքի 9 հոդված):

Կատարողական վարույթին քաղաքացիների մասնակցությունը, որպես ընդհանուր կանոն, կապված է նրանց 18 տարին լրանալու հետ: Անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը կատարողական վարույթում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգորդները), խնամակալները կամ հոգեբարձուները, որոնք պետք է ներկայացնեն իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

Քաղաքացիները կարող են կատարողական վարույթին մասնակցել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը կատարողական վարույթին նրան չի զրկում ներկայացուցիչ ունենալու իրավունքից: Իրավաբանական անձանց մասնակցությունը կատարողական վարույթին իրականացվում է նրանց մարմինների կամ պաշտոնատար անձանց միջոցով, որոնք գործում են օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում կամ ներկայացուցիչների միջոցով: Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձինք պարտավոր են ունենալ իրենց պաշտոնական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր: Եթե պարտապանը կատարողական թերթով պետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք նա կարող է կատարել միայն անձամբ, ապա նա իրավունք չունի գործել ներկայացուցիչի միջոցով (օրենքի 10-րդ հոդված):

Ներկայացուցչի լիազորությունները պետք է հաստատված լինեն լիազորագրով, որը տրված և ձևակերպված պետք է լինի համապատասխան օրենքով:

Կատարողական վարույթին մասնակցելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարել կատարողական վարույթի հետ կապված գործողություններ: Ներկայացվողի անունից տրված լիազորագրում պետք է հստակ նախատեսված լինեն ներկայացուցչի հետևյալ լիազորությունները՝ 1. կատարողական թերթի ներկայացնելը և հետ վերցնելը, 2. լիազորություններն այլ անձի փոխանցելը (վերալիազորում), 3. բռնագանձված գույքը և (կամ) դրամն ստանալը, 4. հարկադիր կատարողի գործողությունների դեմ բողոքարկելը: Բացի դրանից «Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված են կատարողական

վարույթում կողմերի ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն կնքել հաշտության համաձայնություն, կատարողական թերթով իրավունքները փոխանցել մեկ այլ անձի, ծանոթանալ կատարողական վարույթի նյութերին, քաղվածքներ անել դրանցից, ստանալ պատճենները, անել միջնորդություններ, մասնակցել կատարողական գործողություններին, տալ զրավոր ու բանավոր բացատրություններ, ծագող բոլոր հարցերի վերաբերյալ փաստարկներ և նկատառումներ, առարկել կատարողական վարույթին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների և նկատառումների դեմ, հայտնել բացարկներ, բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները, օգտվել օրենքով իրեն վերապահված այլ իրավունքներից: Կատարողական վարույթի ընթացքում կողմերը պարտավոր են կատարել օրենքի պահանջները:

Բացի վերոհիշյալ ընդհանուր իրավունքից և պարտականություններից կողմերն ունեն իրենց առանձնահատուկ իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, պահանջատերն իրավունք ունի տեղեկանալու, թե տվյալ պահին որտեղ է գտնվում կատարողական թերթը, դիմել դատարան կատարողական թերթ ներկայացնելու ժամկետը վերականգնելու համար, լրիվ կամ մասնակիորեն հրաժարվել բռնագանձումից, հետաձգել դատական ակտի կատարումը և այլն: Որոշակի գործողությունների կատարման պարտադրված պարտապանն իրավունք ունի ակտը հոժարակամ կատարելու համար ժամկետ խնդրել, դիմել հետաձգելու կամ տարաժամկետելու կատարումը, փոխել կատարման կարգը, եղանակը և այլն:

Մեր կարծիքով պահանջատիրոջ իրավական վիճակը գործող օրենսդրությամբ սահմանափակ է: Ինչպես նշել ենք՝ պահանջատերը չի որոշում կատարման եղանակը: Ավելին, պարտապանն է մատնանշում, թե առաջին հերթին ինչ գույքի կամ առարկայի վրա պետք է տարածել բռնագանձումը:

Մյուս օրենսդրական թերությունն, որով օրենքը պարտապանին դնում է «արտոնյալ» վիճակում «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածն է: Զաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերից բացի լրացուցիչ հնարավորություն ընձեռնելով՝ հետաձգել կամ տարաժամկետել դատական ակտի կատարումը, փոփոխել կատարման եղանակն ու կարգը, օրենքը չի նշում, թե վերջապես նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով օրինական ուժի մեջ մտած վճիռը նույն դատավորը կամ

դատարանը քանի անգամ կարող է կասեցնել կամ հետաձգել կատարողական գործողությունների ընթացքը:

Ծառայությունում առկա են բազմաթիվ կատարողական վարույթներ, որոնք տարիներ շարունակ կասեցված են:

Միայն 2002 թվականի ընթացքում ԴԱԴ մարզային ստորաբաժանումներում դատարանների կողմից կասեցվել են 183 և հետաձգվել 145 վարույթներ, որոնցից 150-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին:

Այսպես, Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 23.11.98թ. թիվ կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթով մինչև 2003թ. այն կասեցվել է յոթ անգամ, ընդ որում, երեք անգամ վճիռը կայացրած նույն դատավորի, իսկ չորս անգամ՝ նույն դատարանի կողմից:

Սույն հարցի ոչ լիարժեք օրենսդրական կարգավորումը չարաշահումների տեղիք է տալիս և վերջապես կոպիտ կերպով ոտնահարվում է պահանջատիրոջ իրավունքներն ու օրենքով պաշտպանվող շահերը:

Այուս կարևոր խնդիրը դատարանների կողմից հայցի ապահովման ինստիտուտի լիարժեք կիրառման ապահովումն է: Քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված հայցի ապահովման միջոցների կիրառումը դատարանների կողմից քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների իրական պաշտպանության կարևոր երաշխիքներից է:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված հայցի ապահովման միջոցներն են. պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագցի չափով արգելանք դնելը, պատասխանողին որոշակի գործողություններ արգելելը, այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների արգելելը, գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց հարուցելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը: Անհրաժեշտության դեպքում դատարանն իրավունք ունի կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց: Դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ հայցի ապահովման դեպքում պատասխանողն իրավունք ունի հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին մուծել հայցվորի պահանջած գումարը: Ընդ որում, հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այս ինստիտուտի ճիշտ կիրառումն ապահովում է դատական ակտերի պատշաճ կատարումն ու կատարման արդյունավետությունը:

Հայցի ապահովման միջոցների կիրառման նշանակությունն այն է, որ այդ միջոցով պաշտպանվում է հայցվորի օրինական շահերը, երբ պատասխանող գործում է անբարեխիղճ: Նման միջոցներ ձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի լիարժեք կատարումը: Տեղին է նշել, որ իր գործունեության մեջ հարկադիր կատարման մարմինները միշտ են առընչվում նման դժվարությունների, իսկ հայցի ապահովման պարագաներում հաճախ են միահյուսվում հայցային և կատարողական վարույթները և ակնհայտ է դառնում դատական և գործադիր իշխանության փոխադարձ կապն ու հեղինակությունը: Հարկադիր կատարման ծառայության փորձը ցույց է տվել, որ պատասխանողն իմանալով իր դեմ ներկայացվող հնարավոր հայցին, վաղօրոք միջոցներ է ձեռնարկում հայցվորի պահանջները խափանելու համար՝ կրճատում ապահովման ենթակա գույքի քանակը, նոր հաշիվներ բացում բանկերում, գույքը իրացնում, նվիրում կամ այլ անձանց անունով ձևակերպում:

Այս առումով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածը արդարացի է լուծում հարցը, նշելով, որ գործին մասնակցող անձի միջնորդությունը դատարանը քննարկում է այն ստանալու օրը: Սակայն մեր կարծիքով, վերոհիշյալ նորմերն ավելի կատարյալ կլինեին, եթե դատարանին իրավունք վերապահվեր նաև «իր նախաձեռնությամբ» միջոցներ ձեռնարկել հայցի ապահովման համար: Կատարողական վարույթի առումով օրենսդրական թերությունն այն է, որ օրենսդիրը չի պարտավորեցնում դատարանին միջոցներ ձեռնարկելու: Գտնում են, որ օրենքի վերախմբավորումը հայցի ապահովման միջոցներ կիրառելու համար «դատարանը կարող է» բառակապակցությունը անհրաժեշտ է փոխարինել «դատարանը պետք է» բառակապակցությունով: Դրանով կապահովվի կողմերի դատավարական համահավասար իրավունքների պահպանման սկզբունքը, այլապես հայցի ապահովման ինստիտուտը կորցնում է իր իմաստը, տեղիք է տալիս չարաշահումների և խոչընդոտում հարկադիր կատարման ծառայության կատարողական գործողությունների արդյունավետությանը:

Պահանջատիրոջ և պարտապանի իրավական վիճակը համեմատելիս դժվար չէ նկատել, որ դրանք տարբեր են՝ մի կողմը պարտավոր է վճարել պարտքը, իսկ մյուսը առաջին կողմի համեմատ ունի անվիճելի նյութական

իրավունքներ, որը ենթակա է հարկադիր իրականացման: Հարկադիր կատարման եւթյունը այն է, որ պարտապանի կողմից կամավոր իր պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքում հարկադիր կատարողը վերջինիս նկատմամբ կիրառում է հարկադիր կատարման միջոցներ, որոնք թույլ են տալիս վերականգնել պահանջատիրոջ խախտված՝ իրավունքները հակառակ պարտապանի կամքի:

Օրենսդրության վերլուծությունը և կատարման փորձը ցույց է տալիս, որ կատարողական վարություն հետին պլան է մղվել պահանջատիրոջ շահերի պաշտպանությունը: Ղրա հետ մեկտեղ գործող օրենսդրությամբ մեծ ուշադրություն է հատկացվել պարտապանի իրավունքների պաշտպանությանը: Պրոֆ. Վ.Վ.Յարկովի կարծիքով, կատարողական վարություն հանգուցային խնդիրներն առաջանում են կապված պարտապանի շահերի երաշխիքների աստիճանի չափից ավելի բարձրացման, կատարողական վարություն իրականացվող դատական ակտի չկատարման համար անբավարար պատժամիջոցների, հարկադիր կատարման միջոցների նեղ շրջանակի պատճառով, որոնք կարող էին լինել ավելի բազմաբնույթ¹: Պարտապանի շահերի երաշխիքների աստիճանի բարձրացման վառ օրինակ է համարվում հարկադիր կատարողի կողմից «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով կատարողական վարույթ հարուցելուց հետո պարտապանի համար կամավոր կատարման ժամկետ սահմանելու առաջարկությունը: Անհիմաստ է նման ժամկետ տալը, քանի որ եթե պարտապանը կամավոր կատարելու լիներ, ապա դա կաներ մինչև վճռի կայացումը կամ վճիռ կայացնելուց անմիջապես հետո:

Այնուամենայնիվ օրենսդիրը կատարողական վարույթի համար սահմանել է այնպիսի սկզբունքներ, որոնք հնարավորություն են տալիս հարկադիր կատարման նորմերն ուղղորդել իրավունքների և օրինական շահերի պաշտպանության որոշակի հունով: Այդպիսիք են պարտապանի անձեռնմխելիությունը, պարտապանի և նրա ընտանիքի անդամների գոյության համար միջոցներ թողնելու, բռնագանձված գումարները պահանջատերերի միջև բաշխելու և այլ նորմեր:

¹ Сту, Ярков В.В. Концепция реформы принудительного исполнения в сфере гражданской юрисдикции // Российской юрисдикции журнал. 1996, N2 էջ 32-37.